«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2025թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,
Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2025թ. հաշվետվությունը:

Նպատակ ունենալով բարելավել ներքին աուդիտի որակը և արդյունավետությունը՝ 2025թ. ընթացքում Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները, որոնք հանդիսանում են «Ներքին Աուդիտորների Ինստիտուտ - Հայաստան» (The IIA Armenia) կազմակերպության անդամներ, մասնագիտական գիտելիքների ընդլայնման և աշխատանքային հմտությունների կատարելագործման համար մասնակցել են տարբեր մասնագիտական դասընթացների, սեմինարների և վերապատրաստումների: 2025թ.-ին 2 աշխատակից ստացել է միջազգային որակավորում փողերի լվացման դեմ պայքարի (AML) ոլորտում, 2 աշխատակից՝ ESG ոլորտում և 1 աշխատակից՝ սանկցիոն ռիսկերի կառավարման ոլորտում:

2025թ. ընթացքում Ներքին աուդիտի կողմից հիմնականում իրականացվել են բարձր և միջին ռիսկային գնահատված ոլորտների, գործառույթների, գործընթացների և տարածքային ստորաբաժանումների ստուգումներ, որոնց արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ գործընթացների արդյունավետության բարձրացման և նորմատիվ կանոնակարգման կատարելագործման նպակատով:

Տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ:

1. Գլխամասային գրասենյակ

- Բանկում ներքին աուդիտի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի պահանջների վերանայում և կատարելագործում: Ներքին աուդիտի տարեկան ծրագրի կազմման մեթոդաբանության մշակում և հաստատում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության աուդիտ՝ համաձայն ՀՀ ԿԲ 173-Ն որոշման պահանջների:
- Դատական ակտերի հարկադիր կատարման արդյունքում ստացված միջոցների հաշվին վարկերի մարման գործընթացի վերլուծություն:
- Գրեյդինգի նոր համակարգի վերլուծություն և գնահատում:
- Բանկում դրամարկղային գործառնությունների արդյունավետության և կարգավորման գնահատում:
- Բանկի մասնաճյուղային ցանցի կառավարման գնահատում՝ ներքին հսկողության համակարգի նվազագույն պահանջներին համապատասխան:
- Հիփոթեքային վարկավորման ռիսկերի գնահատում, այդ թվում՝ կառուցապատողների/շինարարական ընկերությունների ընթացիկ վարկունակության գնահատում:
- Մանր սպառողական և քարտային վարկերի գծով պարտավորությունների բռնագանձման գործընթացի արդյունավետության գնահատում:
- Պատվիրակման գործընթացի արդյունավետության գնահատում:

- Իրավաբանական անձանցից միջնորդավճարների գանձման գործընթացի ստուգում:

- Իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացի արդյունավետության գնահատում:
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում և ներքին հսկողության համակարգի գնահատում:
- FATCA-ի պահանջներին համապատասխանության գործընթացների վերլուծություն:
- Կապիտալի համարժեքության ներքին գնահատման գործընթացների (ICAAP) արդյունավետության գնահատում:
- Պարգևավճարների հաշվարկման և վճարման գործընթացի ուսումնասիրություն:
- Ներքին և արտաքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգում և «Յունիգրուպ» ֆինանսական խմբի, մասնավորապես՝ «ՌեԳո Ինշուրանս» ընկերության գործունեության և ներքին հսկողության արդյունավետության գնահատում:

2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում համալիր ստուգման են ենթարկվել թվով 7 մասնաճյուղ, թվով 5 մասնաճյուղերում կատարվել են ոսկու գրավով վարկերի նպատակային ստուգումներ, 19 մասնաճյուղերում կատարվել են դրամարկղային հանգույցների գույքագրումներ, ինչպես նաև թվով 13 վճարային տերմինալների և բանկոմատների գույքագրում:

3. Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա ընթացքում իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, մասնավորապես՝

- «ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի ավտոմատ համեմատման ալգորիթմի կիրառության վերաբերյալ» նվազագույն պահանջների ապահովման արդյունավետության գնահատում:
- Լիազորագրերի տրամադրման գործընթացի ուսումնասիրություն:
- Վարկառուների հաշիվների վրա արգելանքի դեպքում վարկի մասնակի կամ լրիվ մարումների գործընթացի գնահատում:
- 100 մլն դրամ և ավելի գումարի առևտրային վարկերի, 50 մլն դրամ և ավելի գումարի հիփոթեքային և սպառողական վարկերի նպատակային ուսումնասիրություն, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում և այլն:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- կազմվում է արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, նշանակվում են պատասխանատու անձինք/ստորաբաժանումներ և սահմանվում են կատարման ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից (ցածր, միջին և բարձր), արձանագրված խնդրի բնույթից,
- եռամսյակային կտրվածքով իրականացվում են արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողական աշխատանքներ՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով:

Ներքին աուդիտի եզրակացությունը
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- ✓ Բանկի Ներքին աուդիտի 2025թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները:

- ✓ Ներքին աուդիտի կողմից աուդիտի ենթարկված ստորաբաժանման ներքին հսկողության համակարգին տրված գնահատականները (ներքին հսկողությունը գնահատված է քառաստիճան համակարգով՝ բավարար, հիմնականում բավարար, մասամբ բավարար, անբավարար գնահատմամբ)**:** Մասնաճյուղերին և գործընթացներին տրվել է «հիմնականում բավարար» գնահատականը:

- ✓ ընթացիկ հսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները:

- ✓ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բարձրացված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

- ✓ KPMG աուդիտորական ընկերության ստուգման արդյունքների հիման վրա «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները, ձեռնարկվող միջոցառումների արդյունքում, լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի տնօրեն
Արթուր Ղուկասով